24. ՇԱՀ-ՄԱՐԱՆ

Կէղնի, չէղնի աղքատ տղէ մա կէղնի։ Հ՚ինք էշակչութեն կէնա։ Փետ կբերա քաղաք, կծախա ուրին։

Օրերաց օր մի կխաղա գետնի հետ, կտեսնա օր էղտեղ բոլոր սալ մա կէրևա։ Շրջեց սալ իշքեց, տեսավ օր բղիկ մա լիք մեղր հորուվ ա դետին։

Կիգա հ՚ընգերներուն լուր կիտա։ Հ՚ընգերներ կիգան։ Հ՚ընգերներ զէդի դրին պահապան, գացին ուրանց տիկ բերին, օր մեղր հ՚ըլնան մեջ, տանին։

Հ՚եր օր կկիստի, տղեն կմտնի մեջ, քտոցով կվերու, կիտա հ՚ընգերներուն, էնոնք լե հ՚ըլին տիկն ու տավարչուխ։

Էդ օր կպարպի, տղեն կթորկին մըջ բղկին, կէրթան տուն։ Հետո կիգան տղի մամուն կըսին. «Ջենեվերներ զտղեդ ի կերան»։

Տղեն մնաց ըգտեզ։ Բղիկ սրբեց ու կերավ՝ հերի մեղր պարպավ։

Տղեն էսպես անկաջ դրեց, լսեց օր բղկի տկեն խըշշոց կիգա։ Տղեն մտածեց օր՝ զարկիմ, բղիկ կոտրիմ, սանք՝ թե ինչ կա բղկի տակ։

Տղեն զարկեց, բղկի տակ կոտրավ։ Բղկի տակ օր կոտրավ, տղեն պատավ ջրի մեչ։ Ջուր տղեն քշեց՝ տվեց ի դիտու ափ։ Տղեն հ՚ելավ դուրս, տեսավ օր հանդե քոշկ ու սարե մի կէրևեր։

Ըսեց. «Վալլա, պիտի էրթամ էտ քոշկ ու սարենն»։ Գնաց էդ քոշկ ու սարին։ Մտավ ի ներս, տեսավ օր կերակուրներ պատրաստ են։ Բաշլեց ուտել։ Տեսավ օր գետին թունդ առավ։ Իշքեց օր շատ օձեր զուրանց դլխըներ տընկած, դեմի տղեն կիգեն. Իշքեց օր ամընուց հ՚առեջ էրկու օձ ջուխտ կքելին, մեկ օձ լե ընդոց վրեն պառկած ա։

Տղեն վախեցավ։ Էն Լրկու օձու վրեն պառկող օձը՝ Շահ-Մարան, տեսավ որ աղեն վախեցավ։ Ուր օձային շապիկ ուր վըրըվեն պատուց, էղավ Հուսնիկ հրեղեն աղչիկ մի, կանավ տղի հ՚առեջ։

Շահ-Մարան օձերուն հրաման էրեց, կանան։ Շահ-Մարան վազման էկավ, գրկվավ տղի էրեսներուն։

Կըսա.— Օրհնյալ աստված, թե ես իսան օղլու էրես տեսա,— ու բավական խնդացավ տղի վրա։

Շահ-Մարան շատուց էր կարգվելու ու չըր ուզեր ուր հորըզբոր տղեքներուց առնել։ Ա՚խ կաներ, կըսեր. «Մե հողածին ընկնի ձեռս, հետը կարգվիմ. ահա իմ մուրազը կատարավ»։

Ու բերեց ուր օրենքով պսակ էրեց։ Տարձավ խանչեց ուր հորըզբոր աղեքներ, պատվեց զէդոնք ու ծանոթացուց ուր էրկան՝ Աբգարի հետ։

Շահ-Մարան ու Աբգար մեկ տաս, քսան տարի իրար հետ ապրան։ Քսան տարուց հետո Աբգար կանչավ, ըսավ թե.—Շահ-Մարան, ես պետք է էրթամ իմ մամ տեսնամ ու դառնամ իգամ։

Շահ-Մարան որ տեսավ տղեն պտի էրթա, ըսեց.—Տղա՚, կէրթաս, կփոշմննիս քու էրթըլուն,—դարձավ ըսեց,— գինամ, որ կէրթաս, քըզի հեքիաթ մա կա, կըսիմ։ Եբ որ իմ հեքիաթ խըլըսավ, կէրթաս՚ գնա։ Իմ հեքիաթ քըզի կըսիմ լե ու մեկ խսա կըսիմ քզի, գնա։

Կըսե.— Տղա, կէղնի չէղնի թագավոր մի կէղնի։ Ըդ թագավորի անուն Խոսրով էր։ Ըդի պատկերք մի գտավ ի չոլ։ Ինչպես որ Խոսրով թագավոր ըդ պատկերքին մտիկ էնեց, չըկարգվավ, ու օլորտավ, զուր հարստութին էդ պատկերքի համար կորցուց ու չըգտավ զպատկերքի տեր, Խոսրով թաքավոր բերեց ուր Խաս-բաղչեն քոխ մա շինեց, պատկերք հ՚ինք կախեց ու չըկարգվավ, Տղա, ինչխ որ էն ուր չկարգվելուն փոշմընավ, դու լե քու էրթըլու մեջ կփոշմընիս, քու մամ մեռեր ա։

Տղեն ըսեց.— Շահ-Մարան, քինե հիվի կէնիմ որ թորկիս ես էրթամ, իմ մամու խաբարն առնեմ՚ թե ո՚րն ա իմ մամուն տիրութին էրի, հող դրի։

Տղեն էլման ըսեց.— Շահ-Մարան, քու հեքիաթ թըմա՚վ։

Շահ-Մարան ըսեց.— Կանի տեսնինք, թե Խոսրով թագավոր ինչ արավ։ Զուր հարստութեն կորցուց ըդ պատկերքի համար ու չըգտավ ու հ՚ինք ըխտիարցավ։ Ուր ըխտիարութնի մեջ ըսեց. «Վա՚յ-վա՚յ, ես ինչպես պատկերքին մտիկ էրի, չըկարգվա»։ Տղա, ինչխ որ Խոսրով թագավոր փոշմընավ՚ դու լե քու էրթըլուն կփոշմընիս։

Նորեն տղեն կրկնեց ու խընդրըվավ։

— Տղա,— ըսեց,— դու ինչի՚ ըդ խդար կվռազաս, աստված քու տուն ավրա, Շահ-Մարանի պես կնիկ մա քու ձեռ հ՚ընկի։

Տղեն էլման հիվի էնեց, ըսեց.— Թո՛ր էրթամ՝ տեսնամ, թե մըր ավայիք սըլամա՞թ ա, թը՝ չէ։

— Հեր ի իմ հեքաթ ըրթմի՝ քզի չըմ թորկի էրթաս։ Սանք խոսրով թագավոր ըդ պատկերք օր գրավ հ՝ոդի, ի՞նչ էղավ։ Խոսրով թագավորին մեռած կնկնից տղե մա կեր։ Ըդ տղեն էլավ, էկավ ուր բաղ ու բաղչեն օլորտավ, բոլոր դռներ բացեց, մինակ էդ քոխի դուռ բաղվանչին չբացեց։ Թագավորի տղեն ասեց. «Բաղվանչի, արի ըս դուռն լէ բաց»։ Ըսավ. «Թագավորի տղա, խազանոց է, կկըղտոտի քու շորերդ»։ Տղեն զոռեց վրեն, ըսեց. «Դուռ պտի բանաս»։ Բաղվանչին չարնաչար զդուռ բացեց։ Խոսրով թագավորի տղեն՝ Մուրադ, ներս մտավ, իշքեց էն աղչկա պատկերք, օր տեսավ, խելք գնաց։ Քիչ ետ խելք էկավ վրեն, հ՝էլավ կանավ ու զուր բաբ տվեց տուն, էկավ։ Էկավ տուն, պապուն ըսեց. «Ձիս պտի կարգիս»։ Պապն ըսեց. «Աչիչս վրա, որդի, հալբաթ պիտի կարգիմ. ո՞ր ոզիրի, ո՞ր թագավորի աղչիկն կուզե՞ս, ասա՝ զքըղի կարգիմ»։ Ըսավ. «Ըն պատկերք օր կախեր իս Խաս-բաղչի քոխք, ըն պատկերքի տեր կուզիմ»։ Պապն ըսեց. «Որդի, ես իմ թագավորութեն կորցուցի, չըկ՝ոցա գտա զէդ պատկերքի տեր»։ Ըսեց. «Պա՛պ, իմն էղնի՝ էս ա, չէղնի՝ էս ա»։

—Տղա,—ըսեց Շահ-Մարան,—ինչիս օր Մուրադ ուր պապուն մտիկ չէրեց, էլավ ընդավ սար ու քար ու փոշմընավ ուր էրթալուն, ղու լե էլման քու էրթըլուն մեչ կփոշմընիս։ Տղա, քու մեր մեռեր ա։, կփոշմընիս, մ՝էրթա։

Տղեն ըսեց.— Շահ-Մարան, խնդրիմ, էրթամ սանք՝ մըր դըրացոց մոտեն ո՞ր մեկն ա աղքատացեր ա, ո՞ր մեկն ա հարստացեր ա։

Ըսավ.— Տղա, կանի տեսնանք Մուրադ օր ուր պապուց հ՝ըռկավ գնաց, իմա՞լ էղավ։ Մուրադն վերցուց ուր կորա փարա, ուրեն հետն առեց էրկու մշակ ու ուր պապու հողեն էլավ։ Գնաց մոտեցավ մեկ քաղաքին։ Մտավ քաղքի մեջ, շհուդ մա քաղքի մեջ կօլորտեր ու կըսեր. «Որ օր ընձի մշկութեն էնա, գայոց-գահ քառսուն օսկի ուրեն փարա կիտամ, իմ էրկու աղչրկան մոտ լե կպառկըցում»։ Մուրադ մշկըտոց ըսեց. «Մշկըներ, էս էրկու խուռչի օսկին ձըզի, ես կէրթամ գայոց-գահ մըշկութեն կէնիմ»։

Մուրադ էլավ գնաց ըդ շհուդի տուն։ Գիշեր քնավ ըդ աղչկտոց մոտ, աղչիկներ ըդ պատկերքի տեր չեն։ Ջհուդ աղոթըրնին հ՝իմցուց տղին։ Էրկու ձի դուրս քաշեց, էլան ինք ու տղեն հեծան, գացին ծովու պռուկ, ըզմեկ ձին մորթեց, տղին ըսեց. «Ձիու փոր ձևա»։ Տղեն ձիու փոր ձևեց։ Ըսավ. «Մտի ձիու փոր»։ Տղեն մտավ։ Ջհուդ ըզձիու փոր կարեց, ըսավ. «Երազ կտեսնաս հ՝ոդի, կէլնիս ընձի խսա կէնիս»։ Ըդ հազ շհուդ հեռեցավ։ Գիշհավքեր զարկին, շանդակ վերցին։ Տարան, ծովու հ՝օրթալաղ կղզի մի կար, թորկին էնտեղ, նստան վրեն, կուտին։ Տղեն տեսավ՝ հ՝ինք հիմաց ա, էլավ զոռ տվեց ուրեն, կար փըրցուց, էլավ տուս։ Գիշհավքեր

թռան։ Իշքաց ուրին բոլոր, տեսավ օր հ՚ինք կղզու մա մեչն ա, հանդէ ծովափին չՀուդ լա կէրևա։ Բոռաց. «Աղա, դու իմա՞լ զիս վերցար դրիր հ՚ոդի, ես իմա՞լ գամ, իմա՞լ հ՚ընցնիմ էս ծովուց»։ ՉՀուդ ըսեց. «Ըդ տեղի քարեր, մե ձիաբեռի կորա, թալ, թի գա ըստեխ, ետով ես ինչխ օր ղքըզի դրեր իմ ըդ տեխ, էլման լե կբերիմ»։ Թալեց տղեն ըզքարեր։ ՉՀուդ բառցավ զուր ձին, ըսեց. «Անչափ քու պես հաներ իմ ըդտեխ, սատկած, դու լե էնոնց պես»։ Տղեն ճարահատյալ մնաց։ Շատ փոշմընավ։ Տղա, ինչխ օր Մուրադ փոշմընավ, ուր պապուն անկաշ չէնեց, դու լե քու էրթլու մեչ կփոշմընիս, քու մայր մեռեր ա։

Աբգար իրընդրրվավ, ըսեց.— Թոր, Շահ-Մարան, ես էրթամ մըր էրկիր նայիմ, իգամ, սանք՝ ի՞նչ տեսակ ա, ինչ հալի մեչ ա։

Շահ-Մարան լսեց.—Տղա, սանք՝ Մուրադի վիճակն ի՞նչ էղավ։ Մուրադ նայեց տեսավ օր, աղվես մա էկավ։ Աղվես օր զՄուրադ տեսավ, փախավ։ Մուրադ լե ընկավ աղվեսու ետև։ Ըդ աղվես գնաց, փախավ, մտավ քարերու մեչ, կորավ։ Մուրադ էկավ ասրռվավ մե բանձր քարի մը, ըսեց. «Ես պտի ղիս ըս քարերաց թալիմ, իմ շանդակ չըմնա վըր քարերաց, բալքի թե մեկ ռաստ իգա, իմ շանդակ հորեռ»։ Տղեն զինք թալեց ըդ քարերաց։ Ուրեն կող-մող աղեկ մի ցավաց։ Ժամանակ մի մնաց հ՚ոդի։ Էլավ կանավ, հ՚ուշիկ-հ՚ուշիկ ճամբախ տվեց ուր հ՚առեճ, գնաց։ Իշքեց տեսավ, օր քոշկ ու սարե մի դուրան տեխ կէրևա։ Խրստ էնեց էդ քոշկ ու սարին ու գնաց։ Հասավ քոշկ ու սարին։ Իշքեց տեսավ՝ էնտեխ մե ըխտիար մարդ մա կեր։ Ըսեց. «Բարև քեզ, ըխտիար»։ Ըսեց. «Ասսու բարին, Խոսրով թագավորի տղա Մուրադ, վըր իմ աչիչ, վըր իմ գլխուն»։ Ըսեց. «Հայր, դու ի՞նչխ կճանչնաս, օր ես Մուրադն իմ, Խոսրով թագավորի տղեն իմ»։ Ըսաց. «Հա՜, ապա ես չըճանչնա՞մ,—ըսաց,—Մուրադ, ես իրեք օր կքնիմ, իրեք օր լե հ՚իմաց կմնամ»։ Ու քնավ։ Էլավ տղեն էդոր գլխու հետ խաղցավ, տեսավ օր ըստեխ յոթ հատ բալնիք գտավ։ Էլավ քոշկ ու սարի դռներ բացեց։ Գնաց մեկ տեխ, տեսավ մե հավուզ մա կա։ Ըդ հավուզի կուշտն էլ հ՚օդե մա կար։ Մտավ հ՚ոնի ու իշքեց հավուզի վրա։ Տեսավ, օր էրկու էղվընիկ էկան, նստան հավուզի ծառի վրեն։ Ըն մեկ էղվընեկ ըսաց մեկելին. «Քուր, իսանի հոտ կիգա ըստեխենն»։ Ըսավ. «Աղչիկ, էսքան ժամանակ Դայրեմլուկ* էս հավուզ խերու համար մըզի սուքեր ա, մընք կիգանք լողկընանք ու կէրթանք, մընք հողածին չընք տեսեր ըստեխրանք»։ Տղեն անկաշ կէնա, կտեսնա, օր ուրանց շորեր կհանին, կդնին հ՚ոդի ու կլողնան հավուզի ջրի մեչ։ Տղեն կտեսնա, օր էտ էղվընիկներուց մեկն ուր պատկերքի տերն ա։ Ուշիկ մի դուս կէլնե, էտոր շորեր կվերցու ու պահա։ Աղչիկ կմնա տկլոզ ջրի

* Դայր—թռչուն (քրդ., Թ. Բ.)։

մեչ։ Աղչկա անուն Շամսի-Բանո էր։ Մուրադ գնաց, Դայրեմլուկ հ՚իմ-ցուց։ «Հա,—ըսեց ըխթիար,—չէղնի օր Շամսի-Բանոն բռնեցիր»։ Կըսե. «Հա, բռնեցի»։ Դայրեմլուկ ձեռք մի շոր կիտա Մուրադին, կըսա. «Տա.ր Շամսե-Բանոն հադու, բեր»։ Ըդ հաղ Մուրադ շոր կտանա, Շամսե-Բա-նոն կհադցու ու կբերա, էն քոշկ ու սարի մեչ ժամանակ մի կապրին։ ժամանակե մը՝ սորա, տղի պապու քաղաք կընկնի միտք, կէլնի օր իգա ուր պապու քաղաք։ Կիգա կխնդրվի Դայրեմլուկից թը. «Ընձի թորկ, ես էրթամ»։ Դայրեմլուկ կըսա. «Մուրադ, աղեկ չըս էնի օր հ՚ոկցա կէրթաս, չէ՝ դու գինաս» Մուրադ կառնի Շամսի-Բանոն, կընկնի ճամբախ։

Շահ-Մարան կըսա.— Տղա, ինչխ օր Մուրադ մտիկ չէնեց Դայրեմ-լուկին ու փոշմընավ սորա, դու լե էմլա պտի փոշմընիս։

Տղեն ըսեց.— էրթամ իշքեմ, սանք՝ մըր գեղի ուս ո՞րն ա։ Հին մա՞րդ ա, թե էս նորերուց ա։

Շահ-Մարան ըսեց.— Քու ինչ պետքն ա, թե ուս ո՞րն ա, որն չէ։

Շահ-Մարան ըսավ թե.—Տղա, կանի տեսնաք՝ ընդոց հալն ի՞նչ էղավ։ Շամսի-Բանոն ճամբախ չկերցավ քելեց, ըսեց. «Մուրադ, տուր իմ լաթեր հագնիմ, ուխտ էղնի քրզի կառիմ իմ թևերուն, զծով կընցում»։ Մուրադ տվեց զլաթեր, Շամսի-Բանոն զՄուրադն առեց վըր ուր թևե-րաց, զծովն հ՚ընցուց, մոտեցուց Մուրադի պապու քաղքին։ Էլավ Մուրադ քանի մը կուռուշ իտու աղքատի մի ձեռ, պապուն անկըշկըլա տարավ. «Աբո, քու որդին էկավ»։ Մուրադ Շամսի-Բանոի հալվըներ առավ ուրեն մոտ։ Խոսրով թագավորն էկավ, էկավ ու տղին ըսավ. «Որդի, մինակ իմ քեսեր իմ սիրտ մի թորեի, ինչպես իմ զավակ, կիգամ, իմ հարսի էրես պագնիմ»։ Մուրադն ըսավ. «Հայր, դու գինաս, էն լե քու զավակն ա»։ Խոսրով համբուրեց զՇամսի-Բանոի էրսըներ։ Մեկ ժամանակ մնաց, Մուրադ ըսավ. «Հայր, ընձի ավահու մի տեխ տու, ես ընձի քոշկ ու սարե մի շինեմ»։ Խոսրով թագավոր ըսավ. «Որդի, քու կամքն է, հ՚ո ուր կշինիս՝ շինի»։ Մուրադ գնաց մե դաշտի մեչ, ուր պապու քաղքի եզեր, շինեց ուր քոշկ ու սարեն։

Տղեն կըսա.—Շահ-Մարան, քինե կխնդրիմ, օր ընձի թող իտաս, ես էրթամ իմ պապու էրկիր, իմ ծնված էրկիր օլորտիմ ու գամ, ծնված էրկիր քաղցր ա։

Ըսավ.— Տղա, կանի սանք՝ Մուրադ ինչպես ավահին կշինա։ Առաջի հիմքեր օր Մուրադ հ՚իշավ շատ ջոջ-ջոջ քարեր թալեց, ամեկ քար՝ մե պատի կորա։ էն քարեր մաճոլով կվերցեն, կդնեն։ Մեկ քար դնելու կէղնին, Մուրադ ուստեսերուն իզին կիտա՝ թե գացեք ճաշ էնելու, գէտ քար ես կդրիմ տեխ։ Ուստեք օր կէրթան, կբերա Շամսի-Բանոի հալավ-ներ, կդրա հողի վրա, ըզքար կիջու վրեն։ Մեկել օր էրկու խատեն տներ կջիքա վրեն, ինք ու Շամսի-Բանոն կմնան ու մեկտեխ կապրին։

Մեկ տարի Մուրադ հոր մոտ չէրթա։ Հ՚ինք հասկնալով օր ուր հեր գանգատ կէնա ուրնե, թե՝ որդին չի գա իմ մոտ, կէլնի կըսա. «Շամսի-Բանո, դու քիչ հ՚ոդի նստի, ես էրթամ իմ հայր տեսնամ, իգամ»։ Մուրադ գնաց։ Շամսի-Բանոն, ուր պապու տուն ուր միտք ընկավ։ Կէլնի դեսադենա հոտ կենի, տեսնա, օր ուր հալավներ հանդե մեկ քարի տակ դրուկա։ Գետին կծևա, կհանա զուր շորեր, կհագնի, կէլնի էլման մի էզվընիկ, պատուհանեն կպատի։ Կիգա Խոսրով թագավորի պատուհանի վրա, կըսա. «Մնաս բարով, Խոսրով թագավոր, մնաս բարով Մուրադ, հա, ես գացիս»։ Մուրադ օր կտեսնա Շամսի-Բանոն գնաց, ուրեն խելք կընցնի։ Քիչ ժամանակ կմնա, Մուրադի խելք կիգա վրեն։ Խոսրով թագավոր կվերցու կըսա. «Որդի, փերին մարդու քուլֆաթ չէղնի, արի, որ մեկ թագավորի աղչիկ կուզի՞ս, քըզի բերիմ»։

Շահ-Մարան կըսա.— Տղա, ինչպես օր Մուրադ անկաջ չէնեց Դայրեմլուկին, Շամսի-Բանոն ձեռնից հանեց, փոշմընավ ընի ուր հ՚իգալուն մեչ, դու լե քու էրթլուն մեչ կփոշմնիս, մ՚էրթա։

Տղեն վերցուց խընդրվավ Շահ-Մարանից, ըսեց.— Էրթամ, իշքեմ, սանք՝ որն ա մըր գեղի մըչ դրզիր։

Ըսավ.—Կանի, սանք՝ Շամսի-Բանոն գնաց, ըդոր սոն ի՞նչ կէղնի։ Մուրադ կէլնի ղուր որպեսութեն կհոդա, ճամբախ կընկնի ու կէրթա։ Կէրթա, կէրթա էլման ջհուդի քաղքին ռաստ կիգա։ Ջհուդ էլման կբոռա, թե՝ «Ոն օր ղի դայոց-գահ մշկութեն էնա, էնդոր քառսուն օսկի փարա կիտամ»։ Մուրադ կէլնի, կէրթա ընդոր մոտ, կէղնի մշակ։ Ջհուդ էլման ընդոր կհանա ծովու կղզուն։

Մուրադ կբոռա. «Հայր, ես իմալ գամ իդա տեխ»։ Ջհուդ կըսա. «Դու էդ փիլփլան քարեր թալ, թի գա, ես զքե էլման կընցում դեսի»։ «Քու հոգին էլնի, մեկ քար քըզի չըմ թալի, օր մեռնիս, ես հաղ մը լե էլեր իմ ըս տեխ»։ Ջհուդ կսկծալեն ձին կհեծնի ի տուն կէրթա, ըդ ցավով կմեռնի։ Շահ-Մարան հըմալ օր անկաջ չէրեց ուր պապուն՝ Դայրեմլուկին, փոշմընավ, դու լե քու էրթլու մեչ կփոշմնիս։

Տղեն կըսա.—Շահ-Մարան, ասսուն խաթըր տաս, թոր՝ ես էրթամ նայիմ՝ սանք՝ իմ չուսյիր վի՞ր ձեռն ա։

— Է՞, տղա, կանի, սանք՝ Մուրադ մնաց ըդ կղզու մեչ, իմա՞լ էղավ ուրեն վիճակ։ Մուրադ քաշեց ըդ ջանդակ մոտըցուց ըդ զըղուր քարին, կմտնի ջանդկի մեջ ու կգլորցու։ Հ՚ինք ու ջանդակ կիգան տակ։ Կէլնի կէրթա քիչ կլողկնա, կըռհաթի։ Կէլնի էլման բար կիտա Դայրեմլուկի քոշկ ու սարեն, կէրթա։ Բարև կիտա Դայրեմլուկին, «Բարով էկար Մուրադ, Շամսի-Բանոն ա գացի՞ր»։ Կըսա. «Հա»։ Կըսա. «Մուրադ, էլ իմ ձեռք չարա չկա, իմուն օր կա, հավորիքն էր, էս կէղնի եռսուն տարի, օր ես հավորքին կիրակուր կիտամ, թը հավորիքներ սալըխ մա տանս»։

Հավորիքներ կիդան, կիջնեն կերակուլ ուտելու։ Կէնեն օր թըռնեն, Դայրեմլուկ կխնդըվի հավորիքներուց, կըսա. «Եռասուն տարի է, օր ես ծառութեն կէնիմ ձըզի, հալալ էղնի ձըզի, կխնդրեմ, օր Շամսի-Բանո պապու քաղաք սալըխեք ընձի»։ Ամեն մեկ կթռնին, ուրանց լեզվով կերդվին, թե՝ մընք խաբար չունինք։

Աբգար ըստ հաղ կխնդըվի էլման Շահ-Մարանից, թե.— Ես էրթամ, իմ տավար-օչխար սանք՝ իմա՞լ ա։

Շահ-Մարան կըսա.— Տղա, դե կանի սանք Մուրադի հալն ի՞նչ էղավ։ Էլավ Դայրեմլուկ թուխթ դըրեց, իտուր Մուրադին, ըսեց. «Մուրադ, տար ըս թուխթ իմ ախբոր՝ Դայրեհաֆուն, էնիկ քառսուն տարի ա, օր ծառայութեն կէնե հավորիքներուն»։ Մուրադ կէլնի, թուխթ կառնի, ճամբախ կընկնի, կէրթա Դայրեհաֆու մոտ։ Դայրեմլուկ դրեր ա մըջ թխթին, թե՝ օր դու սալըխ կէնիս Շամսի-Բանոի տեխ, քու էղած-չէղած խարչիս ու էս տղեն ուր մուրազին հասցուս։ Կպադա Դայրեհաֆին, զէդ թուխթ, կդնա ճակտին, կըսա. «Որդի, իմ ձեռք բան մի չըկա, բան էլնի՝ հավորիքներուց, թե հավորքներ սալըխ էնեցին, ուժի կորա էղավ, պըտի էնիմ»։ Օր ուրբաթ օր կէղնի, հավորիքներ կերակլեց, բաշլեցին հավորիքներ թըռնել։ Դայրեհաֆին կանչեց. «Հավորիքներ»։ Բոլորը կանան։ Ասավ. «Հավորիքներ, ըս քառսուն տարի ես ձըզի կծառայիմ, հալալ էղնի, դուք Շամսի-Բանո պապու քաղաք սալըխեք ընձի»։ Բոլոր կթռնեն ուրանց լեզվով, երդում կանեն, թե՝ մընք խաբար չունենք։ Դայրեհաֆին կըսա. «Տղա՛, մըզի մեկ ախբեր լե մնաց, առ էս թուխթեր, գնա Մամադ-Բեկի մոտ»։ Մամադ-Բեկ ըսեց. «Տղա՛, մընք օլորտման չենք, կմնա մերուն հավորիքներուց, թը հավորիքներ բան մը էրին, էրին։ Թը բան ընկավ փարին, մըր կարողութեն կվատնեք, զքըզի մուրազին կհասցունք»։ Հավորիքներ էկան, կերակլեց, հավորիքներուն խոսաց, թե. «Էս հիսուն տարի ես ձըզի կծառայիմ, կխնդրիմ՝ ով օր գինա զփարեսներու էրկիր, էս տղեն պետք ա տանե էնտեղ»։ Հավորիքներ հ՛ըմեն, ամեն մեկ ուր լեզվով՝ էրդում էնեց ու թռավ, թե՝ մենք խաբար չունենք։ Մեկ հավորիկ չթռավ։ Ըսեց. «Ես գինամ, բայց ժամանակս ի գացեր ա, ըխթյարցեր իմ, թը քառսուն օր իմ ուզածիս զիս պահիս, ավալ աստված, պտի տանիմ ու հասում էն էրկիր. տես օր իմ գլուխ քաշլցեր ա, ես իմ կնիկ բանցըրցանք, արև իրեցեց իմ գլուխ, ես զարկեցի զիմ կնիկ, պատեցի ծովու ընդեն, իմ խիղճ տանջեց զիս, չթորկի ընդոր ջանդակ ի արևու հ՛առեջ, փորեցի գետին, դըրի հ՛ոնի, հողով ծածկեցի, նորեն դարցա էկա քու մոտ, կապրիմ»։ Մամադ-Բեկ զէդ հավորիկ քառսուն օր ուզածիդ պես պահեց։

Շահ-Մարան ըսավ Արդարին.— Տղա, քու մեր մեռեր ա, էկո իմ մոտ, ըըսվլըիս, քու էրթալուն կփոշմանիս, ի սեր աստծո, մ՛էրթա։

Ըսավ.— Կէրթամ, իշքեմ՝ իմ ջաղաց ի՞նչ ան արած, ջաղցի մաս-

նավոտ բան մի իմ ձեռն ա։ Թե օր ծախած ան, իմ փարի դավին էնիմ։

— Տղա, կանի, Մուրադ հասունք ուրեն տեխ, նոր կէրթաս՝ գնա։ Էդ մարդ ղհավորիկ քառսուն օր պահեց, հավորիկ ուր տեխ առավ, տղեն առավ ուր թևերու վրա, ըսեց. «Տղա, աշխար կէրևա՞» Ըսեց. «Հա, կէրևա, կալի մի շափ»։ Մեկ սահաթ մա թամամ կթռնի, չհարցու։ Հավորիկ ըդհաղ հարցուց. «Աշխար կէրևա՞»։ Տղեն ըսավ. «Չէ, ըդ հաղ էլ չէրևա, աշխար հ՚ըմեն ջուր ա, էլ բան մը չէրևա»։ «Դե, տղա, խայիմ ղքղի բռնե, կիշնիմ»։ Ջտղեն կիջու գետին։ «Տղա,— կըսե,— քաշ իրեք թերուր իմ պոչեն, ինչքան նեղ տեղ օր ընկնիս, ես քղի կհասնիմ»։ Տղեն շնոզբըլավ հավորիկեն, իրեք թերուր քաշեց։ Հավորիկ թռավ, գնաց ուրան էրկիր։ Մուրադն էլավ ուշիկ-ուշիկ ճամբաս մի տվեց հ՚առեջ. դնաց։ Գնաց օր մա, էրկօր, հավուզի մի ռաստ էկավ։ Դու մ՚ասա էդ ախպուր Շամսի-Բանու մամու հավուզն ա։ Կլվացվի ըդ տեխ մարդ։ Ուրեն գլոխ կդրա, կքնա էդ տեխ։ Շամսի-Բանո մամ կճամփա զուրեն ջառիեն ջուր բերե, օր լվացվի։ Աղչիկ կիգա տեսնի, օր երիտասարդ հողածին մա պառկուկ ըդ տեխ։ Աղչկա խելք կէրթա ըդոր խորոակութենի վրա, կըսե. «Ով աստված, հողածին լե էսման խորոտիկ կէ՞ղնի»։ Տղեն քանի քնուց հ՚իմաց չէղի, ջառիեն կկանի, թամաշա կէնա։ Ջառիեն մտահան էներ ա զուր ջուր տանել։ Ջառի միտ կընկնի, թե՝ չէ՞ ես էկեր իմ ջրի, ղփառչի օռ կղարկա ջրի մեջ, զդառտակ փառչ կառնի, կէրթա։ Խանմ կհերսոտի վըր ջառուն, թե. «Դու հ՚որի՞ն հ՚ըմալ անգրցար»։ Կէրթա զտաշտ կբերա, դրա հ՚առեջ օր թը խանըմ լվացվի։ Կկոռծա փառչ, ջուր չըկա մեջ։ Կըսա. «Ախչի, էսոր էղելութեն ընձի խըսա էնա, թե չէ՝ ղքու գլոխ կիտամ զարկել»։ Ջառեն կվերու կասա. «Խանմ, քընե պահիմ, ասսուց ի՞նչ պահիմ, պառկուկ էր հավուզի մոտ երիտասարդ հողածին մա, պատմելու չէր զուր գեղեցկութենն»։ Խանմ կէլնի, կառնի զուր մեկել աղչիկ՝ Հուրֆային, կէրթա հավզի մոտ։ Տղեն դրե քնուկ էր։ Հուրֆային կըսա. «Մամ, հան, էսիկ մըր փեսեն ա, Շամսի-Բանո իրիկ»։ Մամ կվերցու կըսա. «Քոռնա մըր աղչկա աչք, օր էսպես տղեն էս խդար ճամբներ օլրցուց»։ Հով կէնին, տղեն կքնի։ Տղեն շատ կքնի, քիչ կքնի, կզարթնի։ Տղեն օր կիմնա, զինք կթալա Հուրֆայինի էրեսն ի վեր, դինա, թը Շամսի-Բանոն ա։ Հուրֆային կըսա. «Մուրադ, ես Շամսի-Բանոն չիմ, հանգիստ կացիր»։ Տղեն կլվացվի ու կէլնին ուշիկ-ուշիկ կիգան տուն։ Կիգան ի տուն՝ բերեն ըղտղի պատկեր կհանեն։ Տղի պատկեր կկախեն պատեն, հերի Շամսի-Բանո պապ՝ փերիներու թագավոր կիգա։ Թագավոր օր կմտնի տուն, կըսա թակուն. «Մեր տնեն հողածնի հոտ կիգա»։ Կիշքա կնիկ, զպատկերք նշանց կիտա, կըսա. «Էս պատկերք իմա՞լ պատկերք մա»։ Թագավոր, կըսա. «Շատ խորոտ պատկերք մ՚ա»։ Կըսա. «Թե օր մըր փեսեն էսպես էղնի ու ըստեխրանք էղնի, ի՞նչ պտի խո-

սասա։ Կըսա. «Կնիկ, թե էս մըր փեսեն էղնի, ըդ աղչկա արունք հալալ ա, մարդ իմա՞լ էսպես ջահել մա կթորկա, կիդա։ «Հավատացում քըզի, թագավոր, օր մըր փեսեն քանց ըդ էլ խորոտիկ ա։ «Դե,—ելըսա,—հ՚ուր ա, գնա, առ արի»։

Թակուն կէրթա, ըսըրան լավ շորեր կհագու, կբերա, կիգա։ Թագավոր կտեսնա ու կհավնի։ Կէրթան Շամսի-Բանոն բերելու։ Շամսի-Բանոն դրեր են բըռնատուն, չունքի ուրնե իսանի հոտ կիգեր։ Մուրադ կէլնի, օր էրթա, Շամսի-Բանոն բերի։ Մեր կըսա. «Դու կէրթաս Շամսի-Բանոն բերելու, դուռ օր կրանաս, Շամսի-Բանոն կէլնի, դեմ քի կիգա, դու ըզքու էտև դարցու հ՚ինք, ընդոր էրեսի ժանդ կթափի, քըզի չի վնասա, էդ օր զուր իրիսի ժանդ թափավ, կվերցուք զիրար, կիգաք ի տուն»։ Մուրադ գնաց, Շամսի-Բանո դուռ էրաց, ուր հ՚ետև էրեց դեմի Շամսի-Բանոն։ Շամսի-Բանոն ժանդ թափավ։ Շամսի-Բանոն հերսոտավ, ըսաց. «Դու հ՚որի՞ էսպես էնեցիր, ըսքան ժամանակ ես քու էրեսեն բըռնատուն քաշիմ»։ Մուրադ ձեն մի չհանեց։ Վերցուն զիրար, էկան ի տուն։ Նորեն յոթն օր, յոթ գիշեր փերեսներու թագավոր զտղի հարսնիք բռնեց, հարսնիք էրավ։

Արգար Շահ-Մարանին ըսավ.— Քու հեքիաթ փրցա՞վ։

— Չըփրցեր ա, դու ըզքու ըսած ասա։

Ըսավ.— Շահ-Մարան, ես կխնդրիմ օր դու թորկես զիս, էրթամ մըր էրկիր, տեսնանք՝ մըր հին թագավորն ա նըստու՞կ թախտին, թե՝ ուր որդին։

Ըսավ.—Կանի, սանք՝ ըդ մարդ կմնա ըդ տեխ, թե կիգա։

Ըսավ.— Շատ ու քիչ հ՚ընցավ տարիքներ, օրերուց օր մի Մուրադի միտքն ընկավ ուր պապ, ուր պապու քաղաք։ Էլավ թագավորին ըսաց, թե. «Կխնդրիմ, թագավոր, օր դու թողուքեն տաս, իմ հայրն լե քու ժամանակին ա, ծերացեր ա, ես լե էրթամ իմ հող ու ջրին տիրուքեն էնեմ, ես լե թագավորի մը տղա իմ, ոչինչ մեկ մա չիմ»։ Ըսեց. «Որդի, ընձի մտիկ կէնես, չես էրթաս։

Ըսեց.— Տղա, Արգար, ինչխ օր Մուրադ թագավորին անկաջ չէնեց, առավ Շամսի-Բանոն, էլավ էկավ ու փոշմընավ ուր բերելու մեչ, դու լե կփոշմընիս քու էրթըլու մեչ։ Քու ինչի՞ն է պետք թագավոր վով կնստի, թրխ նստի։

— Չէ,— ըսավ,— կխնդրիմ օր թորկիս էրթամ։

Ըսավ.—Արդար, կանի, սանք՝ էդոնք ինչպե՞ս կէղնին։

Ըսավ.— Տղա, էկան, էկան, մոտցան ծովուն, Մուրադ զարկեց քար ու չախմախ, հավորքու թերուր իրիցեց։ Հավորիկ էկավ, առավ ուր թևերուն զէրկսին լե ու բանձրցավ ի ծովի էրես։ Օր մա, էրկօր հ՚ընցուց սեվային։ Ըսաց. «Դե գացեք, ըստուց ընդեխ ձե բան մա չկա, մենակ շա-

նավրից մուղաթ կենաք։ Թե օր մա քելեցին, կամ էրկօր, Շամսի-Բանոն ըսավ. «Մուրադ, քիչ մը հ'առեջ քելա, ես ջուր մի թափիմ, իգամ»։ Տղեն քիչ հեռըցավ, ըդի գնաց բլի տակ, զէն տեսավ օր Շամսի-Բանոն գոռուն էլավ։ Տղեն վազավ, գել մա փախավ։ Իշքեց օր Շամսի-Բանոն փոր տարեր էր, փլցեր էր։ Մուրադ գրկեց Շամսի-Բանոն, բերեց դրեց Շամսի-Բանոն գլուխ իր չոքին, Շամսի-Բանոն ավանդեց իր հոգին։ Էլավ Շամսի-Բանոն տեխ փորեց ու հոլըկ մա շինեց գերեզմնի մոտ ու նստավ հ'ոդի։ Թե շաբաթ մա նստավ, թե էրկու, հաց լե խըլըսավ։ Օրերուց օր մա պահյա մ'ը էնդիեն էկավ։ Կանչեց զէդ մարդ, բերեց ուր մոտ, ըսեց. «Տղա»։ Ըսեց. «Ի՞նչ ա»։ Ըսեց. «Կտեսնա՞ս ինչքան հարստութեն իմ մոտ կա, բոլոր քեզ կիտամ»։ Տղի մոտ լե թիակ մա կար։ Ըսեց. «Իդա գերեզման բաց, իդոր մեչ քիչ լե լենցու, ընձի լե տեխ էլնի»։ Փորեց տղեն, ըդոր տեխ լենցուց։ Տղեն քաշեց ուր խամեն, դրեց ուրան սրտին։ Թողավ վըր խամին, խամեն պառեկեն տվեց դուս։

Ըսավ.— Արգար, տեսա՞ր, օր էնի անկաչ չէնեց ուր աներոչ, զրկվավ իր մուրազից ու կանանչ արևից։ Ըսավ.— Տղա, հա, իմ հեքիաթ թմավ, ըստ հաղ կէրթաս՝ գնա։

Տղեն էլավ, փշու մա տեխ քելեց, Շահ-Մարան կանչեց.—Տղա, կանի էրկու խոսք կա, քըզի կըսիմ, էլմա գնա։ Տղա,— ըսավ,— դու կէրթաս ձըր թագավոր ցավոտ ա, իմ արուն ա ընդոր տեխ, ընտեխ թըխթբացներ, գիտուն մարգեր կան, քզի կբռնեն, կասին՝ էս մարդն ա, Շահ-Մարանի մոտեն իկե։ Ըզքզի օր բռնեցին, չանի ահ ա, կիգաս զիս կկանչես, ես կէլնիմ կիգամ իմ գլուխ կկտրիք, ես իգալուս օձու կերպարանքով կիդամ, իմ արուն կըլընաք պղնձի մեչ, էդ պղինձ կէփիք, իրեք սաքան կկանի։ Մեկ զըհար ա, ոն օր խմա, տեխն ու տեխ կփիցու, մեկ լե՝ խելք ու գիտութեն ա, մեկ լե՝ դեղ ա, ոն օր խմավ, կհ'արի, կսախնա։ Ըսեց.— Տղա, տոքտոր զահար կգնա քու հ'առեջ, դու հ'իմաց կենաս, տոքտորին կըսես. «Տոքտոր, էս հ'առիք օր բլի, էս գերան օր պատի, մեք կենանք դայազինք տակ»։ Տոքտոր օր կիշքա հ'առիք, քու սաքան դիր տոքտորի հ'առեջ, տոքտորին դիր քու հ'առեջ, տոքտոր կփիցի, դու կաղատիս։ Դե, գնա։

Տղեն կվերցու ուրեն շինած թարանչե մա, լողա ջրի վրայով կիգա կարսին կմոտենա։ Կարսի միջով կէլնի դուրս։ Դուրս օր կէլնի, կիգա քաղաք։ Ռըմտարներ, թըխթըբացներ կիշքեն կըսին. «Շահ-Մարանի մոտեն մարդ էկեր ա»։

Կէլնին կօլորտին քաղքի մեջ, կաշին՝ զէդ մարդ կգտնան։ «Է,— կըսեն,— յան քու գլուխ, յան՝ Շահ-Մարանի»։

Արդար կիգա, կարսի բերնին կկանչա.— Շահ-Մարան, Շահ-Մարան, արի։

Շահ-Մարան կիգա, դուս կէլնի օձու կերպարանքով։ Տոքտուրներ չըն դախ օր կմորթեն, օձու կերպարանք ուրնե կէրթա։ Ժողովուրդ կտեսնա ղէնոր լեշ ու ջանդակ, կանիծեն զթագավորն։ Պղինձ կբռնեն արնի դեմ ու կդնեն կրակին ու կէփին զարուն։ Կէփեն, կմնա իրեք սաքան։ Տոքտուր զահար սաքան կլնա, կդրա Արգարի հ՝առեջ, իմաստութնի սաքան ուր հ՝առեջ, դարմանի դեղի սաքան լե ճոկ կդրա։

Արգար կըսա.— Տոքտոր էֆենտի, էդա գերան կոտրեր ա, տանիք չոքի վըր մըզի։

Տոքտոր վերին դին կիշքի, տղեն սաքան կփոխա։

Տոքտոր կըսա.— Տղա, խմա զքու սաքան։

Տղեն կըսա.— Չէ, հ՝առաջ ղու պտի խմիս։

Տոքտոր կխմա, խմելուն պես կսատկի։ Տղեն կխմա իմաստութնու սաքան, կառնի, դեղի սաքան լե, կիտա թագավորին, թագավոր կխմա ու կսախնա։

Արգար կբերա Շահ-Մարանի գլուխ, կդրա ջանդկի կշտին, լավ կտրած տեխեր, զէրկու դեն կլվա։ Էրակ-էրակ, դեմ դեմի կդնա իրարու, Շահ-Մարանի արնի տեղից քիչ մա պահած էր, կքսա յարեսներուն։ Աստծու հրամանով կսախնա Շահ-Մարան, նորեն կառնեն զիրար, Շահ-Մարանի էրկիր կէրթան, ուրանց համար կապրին հանգիստ։

Էրկու խընձոր իշավ, մեկ՝ ընձի, մեկ՝ քըզի։